ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/122

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ

Մասնակից՝ «Նորայր Զրաղյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5» ծածկագրերով գնանշման հարցում, ծառերի, թփերի և ծաղիկների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6278-2020 գրությամբ «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 16.04.2020թ.-ի թիվ 72/152 գրության հիման վրա, 28.04.2020թ.-ին «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 28.04.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 29.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/122 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել www.gnumner.am կայքում:

20.05.2020թ.-ին և 01.06.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.06.2020թ.-ին:

2. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը 16.04.2020թ.-ի թիվ 72/152 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևայլը.

««Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Նորայր Զրարյան Ա/Ձ-ի և «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի միջև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա 2020թ.-ի մարտի 16-ին կնքվել է N ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 գնման պայմանագիրը, որի ընդհանուր գինը կազմում է 20650000 ՀՀ դրամ: Հետագայում նախատեսվել են ֆինանսական միջոցներ և 20.03.2020թ.-ին Նորայր Զրաղյան Ա/Ձ-ին ծանուցվել է համաձայնագիր կնքելու առաջարկ և համաձայնագրի նախագիծ՝ խնդրելով ծանուցումը

ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել այն, ինչպես նաև Նորայր Զրաղյան Ա/Ձ-ի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինել բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով Կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները, և ներկայացնել Պատվիրատուին: Միաժամանակ տեղեկացվել է, որ սույն ծանուցման մեջ նշված ժամկետում Նորայր Զրաղյան Ա/Ձ-ի կողմից համաձայնագիրը չստորագրելու և նոր ապահովումները չներկայացնելու դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն կլուծվի՝ համաձայն Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջների:

10.04.2020թ.-ին Նորայր Զրաղյան Ա/Ձ-ի կողմից ներկայացվել է գրություն, որով վերջինս հայտնում է, որ հրաժարվում է 32-րդ չափաբաժնի մասով համաձայնագիրը կնքելուց:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերությամբ և Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջները՝ Նորայր Զրաղյան Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ դիտարկելու նպատակով:»:

3. <u>«Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 29.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6278-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 15.05.2020թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար՝ Երևան քաղաքի կանաչապատման համար 2020թ. անհրաժեշտ ծառերի, թփերի և ծաղիկների ձեռքբերման նպատակով 07.02.2020 թվականին հայտարարվել է թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5» գնանշման հարցման (այսուհետ՝ Գնման ընթացակարգ):

Գնման ընթացակարգի թիվ 32-րդ և 64-րդ չափաբաժինների շրջանակում 16.03.2020 թվականին Պատվիրատուի և Ա/Ձ Նորայր Զրաղյանի միջև կնքվել է թիվ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Գնման ընթացակարգի թիվ 64-րդ չափաբաժնի շրջանակում 10.04.2020 թվականին Պատվիրատուի և Ա/Ձ Նորայր Զրաղյանի միջև կնքվել է N 1 համաձայնագիրը:

28.04.2020 թվականին նախաձեռնվել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու թիվ ՍՅ-ԼՕ-2020/122 ընթացակարգը: Նշված ընթացակարգ նախաձեռնելու համար Պատվիրատուն մատնանշել է Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի բ) պարբերությամն նախատեսված իրավական հիմքը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծությունից պետք է փաստել հետևյալը, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ կարող է նախաձեռնվել նաև այն դեպքում, երբ մասնակցի կողմից չի կնքվում պայմանագիր և նշված հիմքի առկայության դեպքում է հնարավոր մասնակցին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար, որը պետք է կատարվի նման հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ Գնման ընթացակարգի թիվ 32-րդ և 64-րդ չափաբաժինների շրջանակում 16.03.2020 թվականին Պատվիրատուի և Ա/Ձ Նորայր Զրաղյանի միջև կնքվել է թիվ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 պայմանագիրը, ուստի չի կարող խոսք լինել պայմանագիր չկնքելու մասին: Սույն ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած Պատվիրատուի 16.04.2020 թվականի թիվ ՀՀ_Ելից_72/152 գրությամբ մատնանշված փաստական և իրավական հիմքերը չեն համընկնում խնդրի էությանը: Պատվիրատուն մատնանշել է, որ Ա/Ձ Նորայր Զրաղյանը 10.04.2020 թվականի գրությամբ հրաժարվել է 32-րդ չափաբանի մասով համաձայնագիր կնքելուց, իսկ որպես իրավական հիմք նշել պայմանագրի չկնքելը, ի դեպ նույն գրությանը կցելով նաև կնքված պայմանագիրը: Սույնով պայմանավորված Պատվիրատուի նախաձեռնությունը ակնհայտ անհիմն է, քանզի կողմերի միջև առկա է 16.03.2020 թվականին կնքված թիվ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 պայմանագիրը, իսկ 32-րդ չափաբաժնի մասով պետք է կնքվեր համաձայնագիր ֆինանսական միջոցների հատկացումից հետո, որը ինքնին պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու մասին է, այլ ոչ թե ինքնուրույն պայմանագիր է: Նշվածի տարանջատման դեպքում Պատվիրատուն հստակ կփաստեր, որ Ա/Ձ Նորայր Զրաղյանը ոչ թե պայմանագրի կնքումից է հրաարվել, այլ դրանում փոփոխություն կատարելու մասին համաձայնագրից: Ավելի նշեմ, նաև որ կողմերի միջև առկա 16.03.2020 թվականին կնքված թիվ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 պայմանագրի 64-րդ չափաբաժնի մասով կնքվել է համաձայնագիր և թիվ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 պայմանագրով ստանձնած պարտավորությունները շարունակվում են և պայմանագիրը գործողության կատարման ամկետի մեջ է: Ուստի գտնում եմ, որ սույն ընթացակարգի նախաձեռնման հիմքեր առկա չեն, քանզի Ա/Ձ Նորայր Զրաղյանը չի հրաժարվել թիվ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 պայմանագիրը կնքելուց և այն կնքել է 16.03.2020 թվականին, ավելին նշված պայմանագրի շրջանակում կողմերը 64-րդ չափաբաժնի մասով 10.04.2020 թվականին կնքել են N 1 համաձայնագիրը:

Բացի նշվածից պետք է կարևորել նաև այն հանգամանքը, որ 32-րդ չափաբաժնի մասով նախատեսված ժամկետը, համաձայն որի Պատվիրատուն կարող էր 2020թ ընթացքում ցանկացած ժամանակ Ա/Ձ-ին ներկայացներ մատակարարման պահանջ, իսկ Ա/Ձ-ն պարտավոր էր 20 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել դրանք (ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջներ), և որ տվյալ ապրանքները պետք է ներմուծվեին արտերկրից, ինչպես նաև

արտակարգ դրության պայմաններում ապրանքների ներմուծման անհնարինությունը և ժամկետների անորոշությունը, «Նորայր Չրաղյան» Ա/Ձ-ի կողմից 03.04.2020թ ՀՈԱԿ-ին ներկայացվում է գրություն ներկայացված համաձայնագրի շրջանակներում 32-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքների մատակարարման անհնարինության վերաբերյալ, որից հետո ՀՈԱԿ-ի կողմից ներկայացվում է նոր համաձայնագիր առանց 32-րդ չափաբաժնի, որը 10.04.2020թ կնքվել է կողմերի միջև: Համաձայնագիրը 64-րդ չափաբաժնի մասով կնքվում է քանի որ ապրանքները տեղում առկա էին և ցանկացած ժամանակ դրանք կարող էին մատակարարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

3. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

4. (...):

Սույն իրավական նորմի և առկա փաստերի համատեղ վերլուծությունից պետք է արձանագրել, որ պատասխանատվության հիմքեր պարտապանի համար չեն կարող ծագել, եթե առկա է նրա մեղքի բացակայությունը արտակարգ և անկանխելի հանգամանքներով պայմանավորված: Հաշվի առնելով ՀՀ կառավարության 16.03.2020 թվականի թիվ 298-Ն ՀՀ-ում Արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշման և դրա հիման վրա ՀՀ Պարետի 24.03.2020 թվականի թիվ 14 որոշման հիման վրա ՀՀ ողջ տարածքում տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառված սահմանափակումները,

ինչպես նաև ՀՀ տարածք ապրանքների ներմուծման նկատմամբ կիրառված սահմանափակումները պետք է արձանագրել արտակարգ և անկանխելի հանգամանքների առկայության փաստը և «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի մեղքի բացակայության փաստը: «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ն 16.03.2020 թվականին կնքելով թիվ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 պայմանագիրը չէր կարող վստահ լինել նույն օրը ՀՀ կառավարության 16.03.2020 թվականի թիվ 298-Ն ՀՀ-ում Արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշման ընդունման մասին, իսկ կանխատեսման դեպքում էլ չեր կարող հրաժարվել պայմանագիրը կնքելուց, քանզի այն հիմք կհանդիսանար նրա նկատմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար: Ուստի «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ն 16.03.2020 թվականին կնքելով Պայմանագիրը, անմիջապես առնչվեց ՀՀ կառավարության 16.03.2020 թվականի թիվ 298-Ն ՀՀ-ում Արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշման հետ, որը ստեղծեց արտակարգ և անկանխելի հանգամանքներ որով պայմանավորված հնարավոր չէր ապրանքների ներմուծումը Հայաստան: Իդեպ Պատվիրատուն միակը չէ, ողջ աշխարհն է համավարակի արդյունքում հայտնվել նմանատիպ խնդիրների առջև, չնայած «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի գրության հիմքով 32-րդ չափաբժնի մասով համաձայնագիր չկնքելուց հետո կարծես թե՞ պատշաճ գնահատական էր տրվել«Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի գործողություններին և նա չէր դիտարկվել, որպես ոչ բարեխիղճ գործընկեր և նրա հետ կնքվել էր համաձայնագիր 64-րդ չափաբաժնի մասով, սակայն հետագայում գործողությունները կատարվել են անհասկանալի տրամաբանությամբ:

Առաջնորդվելով վերոգրյալով խնդրում եմ մերժել «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը:»:

4. <u>ՍՑ-LO-2020/122 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի միջև 16.03.2020թ.-ին կնքվել է թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի:

iii. Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

iv. Պայմանագրի 8.15-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լածվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

v. Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

vi. Պատվիրատուն 20.03.2020թ.-ին էլեկտրոնային եղանակով «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ին ուղարկել է կնքվելիք համաձայնագրի նախագիծը հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 18-րդ կետով սահմանված պահանջները՝ կից Ձեզ եմ ներկայացնում «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի և «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի միջև 16.03.2020թ.-ին կնքված N ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 ծածկագրով պայմանագրի շրջանակներում կնքվող Համաձայնագրի նախագիծը և խնդրում եմ սույն ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել այն, ինչպես նաև «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինել բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով Կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները, և ներկայացնել Պատվիրատուին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ սույն ծանուցման մեջ նշված ժամկետում «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի կողմից համաձայնագիրը չստորագրելու և նոր ապահովումները չներկայացնելու դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն կլուծվի՝ համաձայն Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջների:»:

vii. Մասնակիցը, ի պատասխան Պատվիրատուի վերոնշյալ գրության, 03.04.2020թ.-ի գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով Ձեր կողմից 20.03.2020թ.-ին ներկայացված «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի և «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի միջև 16.03.2020թ.-ին կնքված N ԿՇՄՊ-ԳՀԱՊ9Բ-20/5-5 պայմանագրի շրջանակներում կնքվող Համաձայնագրի նախագիծը՝ հայտնում եմ. որ 32-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքատեսակը այս պահին չեմ կարող մատակարարել, քանի որ Հայաստանի Հանրապետությունում ՀՀ Կառավարության 16 մարտի 2020թ. N 298-Ն որոշման հայտարարվել է արտակարգ դրություն և համաճարակի պատճառով երկրների միջև սահմանները անորոշ ժամկետով փակ են (ապրանքների ներմուծումը արտերկրից հնարավոր չէ իրականացնել): Հաշվի առնելով որ այս իրավիճակի ավարտը դեռևս անորոշ է, տեղեկացնում եմ, որ հրաժարվում եմ 32-րդ չափաբաժնի մասով վերոնշյալ համաձայնագիրը կնքելուց:

Միաժամանակ սահմանված կարգով Ձեզ եմ ներկայացնում վերոգրյալ համաձայնագրի փոփոխված տարբերակը, ինչպես նաև 64-րդ չափաբաժնի մասով նախատեսված ֆինանսական միջոցների չափով որակավորման և պայմանագրի ապահովումները՝ բանկային երաշխիքների ձևով:»:

viii. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի միջև 32-րդ չափաբաժնի մասով համաձայնագիր չի կնքվել:

ix. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի միջև 16.03.2020թ.-ին կնքված թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5» ծածկագրով պետական գնման պայմանագիրը միակողմանի լուծման մասին ծանուցումը Պատվիրատուի կողմից չի հրապարակվել տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6278-2020 գրությամբ «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 8.15-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լածվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի միջև 16.03.2020թ.-ին կնքված թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5» ծածկագրով պետական գնման պայմանագիր թիվ 1 հավելվածի՝

տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի:

Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

Պատվիրատուն 20.03.2020թ.-ին էլեկտրոնային եղանակով «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ին ուղարկել է կնքվելիք համաձայնագրի նախագիծը:

Մասնակիցը, 03.04.2020թ.-ին Պատվիրատուին հասցեագրված գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է 32-րդ չափաբաժնի մասով համաձայնագիր կնքելուց:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի միջև 32-րդ չափաբաժնի մասով համաձայնագիր չի կնքվել:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «Նորայր Զրաղյան» Ա/Ձ-ի միջև 16.03.2020թ.-ին կնքված թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5» ծածկագրով պետական գնման պայմանագիրը միակողմանի լուծման մասին ծանուցումը Պատվիրատուի կողմից չի հրապարակվել տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ կողմերի միջև 16.03.2020թ.-ին կնքված թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/5-5» ծածկագրով պետական գնման պայմանագիրը միակողմանի լուծման մասին ծանուցումը Պատվիրատուի կողմից չի հրապարակվել տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Պայմանագրի 8.9 կետի և Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթներով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված (ծանուցումը ստացված), ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները, այն է՝

մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Ուստի, նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6278-2020 գրությամբ «Նորայր Չրաղյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/122 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ